№ 78 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 29 1900 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 29 № 78

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴԱՐ ԱՐԾԱՐՈՒՆՔ

Անտա Մինասեան, Սաթենիկ, Լեւոն եւ Արամ Գէորգեաններ Ադամեանցները, խորին ցաւով յայտնելով առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդները իրանց սիրելի հօր՝

ԳԷՈՐԳ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԱԴԱՄԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 27-ին, խնդրում են ազգականներին եւ ծանօթներին չնորհ բերել յուղարկաւորութեան, ներկայ ամսոյ 30-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամի 10-ին, Գօնչարնայա փողոց, № 32, սեփական տանից դէպի Զուղուրէթի ս. Աստուածածին եկեղեցին եւ այնտեղից Խօջի-Վանքի գերեզմանատուն:

Ամբիծքը շաբաթ օր, ամսոյս 29-ին, երեկոյեան ժամի 7-ին: 1—1

30-ին սոյն ապրիլի, կիրակի օրը, Թիֆլիսի հայոց Կուսանաց վանքի Նախավկայ ս. Ստեփաննոս եկեղեցում կը կատարվի ս. պատարագ, որից յետոյ կը կատարվի հոգեհանգստեան պաշտաման կարգ Մոսկվայում վախճանված

ԲԱԽՇԻ ԿԻՐԻԼԵԱՆ ԽԱԼԱԹԵԱՆԻ

համար, որի մասին յայտնում է ազգականներին եւ ծանօթներին Կուսանաց վանքի մայրապետը: Հոգեհանգիստը կը սկսվի 12 ժամին: 1—1

Կիրակի, ապրիլի 30-ին,

ՆԱԽՇՈՒՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԷԼՉԻԲԻԳԵԱՆՑԻ

մահվան քառասունքին

կը կատարվի հոգեհանգիստ Մոլնու ս. Գէորգ եկեղեցում, որի մասին յայտնում են իրանց բարեկամներին եւ ծանօթներին հանգուցեալի մայրը՝ Եղիսաբէթ Զաքարեան Գէորգեանց իր որդկերանցով: Հոգեհանգիստը կը սկսվի առաւօտեան ժամը 12-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգաբնակութեան շահերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենագրութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրօպացիների քաղաքակրթական միջոցները Աֆրիկայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սիրել ամբողջ աշխարհը:

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՀԵՐԸ

—

Երկու տարի առաջ, 1898 թւի մայիս ամսին, կառավարութեան կարգադրութեամբ, թոյլ տրվեց, որ արտասահմանից բերվող գիւղատնտեսական գործիքները եւ մեքենաները ազատվեն մաքսից կամ բոլորովին կամ մի որոշ չափով: Այդ կարգադրութեան դէմ էին գործարանատէրերը, որովհետեւ նրանք ստիպված էին էժանացնել իրանց պատրաստած ապրանքները եւ մտցնել անհրաժեշտ կատարելագործութիւններ արհեստի մէջ, որպէս զի կարողանան մրցել արտասահմանեան մեքենաների հետ, որոնք համեմատաբար աւելի ամուր են, յարմար եւ էժան:

Սակայն ամբողջ գիւղական ազգաբնակութեան շահերը պահանջում էին, որ մաքսերը վերացվէին եւ թեթեւացնվէին: Երկրագործութեան վիճակը տարէցտարի վատանում է եւ գիւղացին որոնում է միջոցներ պակասեցնելու իր ծախքերը եւ աւելացնելու երկրից ստացված արդիւնքները: Անկասկած, էժան մեքենաները եւ գործիքները կարող էին մի փոքր թեթեւացնել նրա ծախքերը եւ նպաստել կատարելագործված մշակութեան ներմուծման:

Արդարեւ փորձը ցոյց տուեց, որ գիւղատնտեսները օգտվեցին արտօնութիւնից եւ սկսեցին ձեռք բերել մեքենաներ: Արտասահմանից Ռուսաստան բերվող մեքենաների թիւը հէնց նոյն 1898 թւին երկպատկվեց եւ 70,000 ռուբլի արժողութիւնից հասաւ 137,000 ռուբլի արժողութեան: Գերմանիայից գալիս են գութաններ, փոցխեր, զտող գործիքներ, Միացեալ-Նահանգներից հնձող մեքենաներ, Անգլիայից կալսող մեքենաներ եւ առհասարակ շոգեշարժ խոշոր մեքենաներ: Գիւղատնտեսները շատ գոհ են արտօնութիւնից եւ յոյս ունեն, որ պետութիւնը, աչքի առաջ ունենալով արդիւնաբերութեան շահերը, կը նուազեցնէ մաքսերի չափը եւ այն բոլոր առարկաների վերաբերութեամբ, որոնք կարող են էժանացնել նրանց սկզբնական ծախքերը եւ այդպիսով կարողութիւն տալ վերականգնելու նրանց տնտեսութիւնը անկման վիճակից: Այնտեղ, ուր խօսքը վերաբերում է ազգաբնակութեան մեծամասնութեան շահերի պաշտպանութեան, մասնաւոր գործարանատէրերի շահերը պէտք է լռեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մարդուն հռչակում են շատ գործեր—մէկին պատերազմի դաշտը, միւսին գրիչը, երրորդին քաղաքական ասպարէզը, հասարակական բարիքը, կրթական եւ բարեգործական հիմնարկութիւնները: Բայց մենք այդ հռչակվածների մէջ ամենից առաջ որոնում ենք մի հարցի պատասխան—ինչպիսի մարդ էր: Դա բնական եւ շատ արդարացի հետաքրքրութիւն է. մեր համակրանքները դէպի մի գործիչ կարող են լիակատար, ամբողջ լինել միայն այն դէպքում, երբ նա իր հռչակի հետ միացնում է եւ մի լաւ մարդու բարի համբաւը: Կարելի է աւելին էլ ասել. տաղանդը կարող է շատ բարձրացնել մարդուն, բայց ընդհանուր համակրանք, սէր չէ կարող ստեղծել նրա համար, եթէ նա իրրեւ մարդ անհամակրելի, բայասական հակացողութիւն է տալիս մեզ: Այդ կողմից հանգուցեալ նկարիչ Այվազովսկին բարեբաղդ է. գեղարուեստական խոշոր տաղանդի հետ նա միացնում էր եւ սիրող, բարի ու կարեկից սրտի գործերը: «Новое Время» լրագրի մէջ հանգուցեալին լաւ ճանաչողներից մէկը գրում է.

Ամէն մէկը, որ ճանաչում էր Այվազովսկուն, շատ լաւ, շատ մօտիկից գիտէ թէ որպիսի ճշմարտասէր, ազնիւ, ամէն բարի թռիչքներին եւ զգայմունքներին մատչելի հոգի էր: Նա կեանք էր մտնում «բարիի համար բաց սրտով» եւ անփոփոխ պահպանում էր հաւատարիմ, շիտակ եւ քնքոյշ հոգի ու մի սիրտ, որ ունէր մարդասէր, մաքուր հայեացքներ կեանքի եւ արուեստի վերաբերմամբ: Այդ զգայմունքները, որոնց ջերմացնում էր Այվազովսկու համարեա պատանեկական, ոգեւորվող եւ յաւիտեան եռացող բնաւորութեան երակը, երեւում են ոչ միայն նրա բոլոր նամակների մէջ, այլ եւ այն գործերի մէջ, որոնց գնահատութիւնը մնում է Ռուսաստանի հարաւի զարգացման պատմաբանին: Այվազովսկին իր հայրենի Թէոդոսիային տուել է կենդանութիւն, մի նոր եւ եռուն գործունէութիւն է հաղորդել նրան: Այս գեղեցիկ, մաքուր քաղաքում այժմ ամէն մի քայլ յիշեցնում է նկարչին, նրա բարութիւնը եւ կարծես նրա կենդանի յուշարձանն է: Մի տեղ ճանապարհորդը տեսնում է Այվազովսկու անունը կրող չքեղ, մարմարեայ շատրւանը, որ կառուցել է նա իր քաղաքի համար եւ «նրա ու նրա ընտանիքի կենացը» (այսպէս է գրված արծաթեայ թասի վրա, որ դրված է շատրւանի մօտ) խմում է լեռնային աղբիւրի մաքուր, բիւրեղեայ ջուրը. այդ ջուրը բերված է Սուքաչիի աղբիւրից, որից թէ նա եւ թէ նրա կինը զանազան ժամանակ նուիրել են քաղաքին հարիւր հազար վեդրօ: Մի ուրիշ տեղ ուղեւորը հանդիպում է հնութիւնների թանգարանին, որ հիմնել է Այվազովսկին իր միջոցներով մի յատուկ շինութեան մէջ, որ կառուցված է նրա ծրագրով: Անցնելով «Այվազովսկու բուլվարով» եւ փողոցով, որ նոյնպէս կրում է նրա անունը, ուղեւորը անպատճառ կը մտնէ հասարակաց ժողովարանի դահլիճը, թանգարանը կամ Դումայի շինութիւնը—եւ ամէն տեղ կը տեսնէ Այվազովսկու ահագին նկարները. դրանց քաղաքին նուէր է բերել նրա առաջին քաղաքացի Այվազովսկին, որ կարող է ամենքի համար օրինակ դառնալ իր բեղմնաւոր, եռանդով լի, անդադար գործունէութեամբ յօգուտ իր հայրենի երկրի եւ արուեստի:

մանալին այն էր, որ այդ ամենը ոչ թէ դրսիցն էին տրամադրում, այլ ուղղակի ինքնաբերաբար ինքս հէնց ինձնից, իմ սրտի թելադրութեամբն էի հետաքրքրվում:

Ներսս սկսել էին նորոգվել մանկական յիշողութիւններս, երբ ես այդ զատկական գիշերները ամբողջապէս ուրախութիւն դարձած՝ կցորդվում, ձուլվում էի զուարճացող ամբոխի հետ ու նրանց հետ միասին խառնվում ու գընում վառվող հազարաւոր մեղրամոմերի լուսաւորութեամբ պայծառացած եւ երգիչների եկեղեցական մեղեդիների քաղցր հնչիւններով կենդանացած եկեղեցին... Սիրտս, որ համարեա թէ մեռել էր այս վերջին շաբաթները, յանկարծ սկսեց ուժեղ կերպով բաբախել, ես այդ զգացի, ես զգացի, որ նա կարծես սկսում է նորից իմս լինել...

Գիշերը հասաւ, ականջիս հասնում էին խօսակցութիւնների հատ ու կտոր հնչիւնները, ես իմացայ որ հայրս եկեղեցի կերթայ Նադիայի եւ Manon-ի հետ, իսկ մայրս տանը կը մնայ, որովհետեւ չէ կարելի, ինձ տանը միայնակ թողնել:

Նադիան փորձ փորձեց եւ ասաց թէ ինչու ինձ էլ չառաջարկել եկեղեցի գնալու, որ այդ բանը ինձ մինչեւ անգամ մի փոքր զուարճութիւն կարող է պատճառել: Հայրս իսկոյն պատասխանեց. Աստուած մի արասցէ, նրան վընաս է բաղմամարդ տեղեր յաճախելը, ձայն ու ձունը եւ ամբոխը. բժիշկը պատուիրել է կատարեալ հանգստութիւն...

Կէս բացված դռան ճեղքից տեսայ Նադիային ճերմակ զգեստով զարդարված... Աչքիս մի քանի անգամ երեւաց եւ Manon-ի նուրբ եւ վայելուչ կազմուածքը ամբողջապէս վարդագոյն զգեստով պատած. ինձ թւաց մինչեւ անգամ, որ նրա սենեակիս դրան մօտից անցնելը պատահական չէր, նա փափագում էր, որ ես նրան անպատճառ նկատած լինէի իր պճրանքով: Ցետոյ լսեցի տան առաջը կանգնող կառքի ձայնը. նրանք դուրս եկան, կառքը նստեցին եւ գնացին:

Անցաւ մի կէս ժամ, սենեակս մտաւ մայրս:

—Լաւ կանէիր, հոգեակս, որ պառկէիր քընէիր, քեզ վնաս է այսքան երկար նստելը—քնքշութեամբ ասաց մայրս:

—Ոչ, ես չեմ քնի այս երեկոյ—պատասխանեցի ես:

Այդ արդէն նրա համար նորութիւն էր: Առաջ ես ոչ մի անգամ չէի մերժում ինչ որ ինձ պատուիրում էին, որովհետեւ ինձ համար այդ մի եւ նոյն էր: Շատ կարելի է իմ ձայնիս մէջ մայրս այլ եւս չը նկատեց առաջվան պաղութիւնս, բայց ես նկատեցի, որ նրա վերջին ժամանակներս այնքան անհուն տխրութիւն արտայայտող աչքերի մէջ կարծես մի ինչ որ յոյսի ճառագայթ փայլեց:

—Է՛հ, ինչպէս որ կամենում ես, սիրելիս, միայն այդ լաւ չէ քեզ համար... Ինչպէս կամենում ես, սիրելիս...

Նա դուրս գնաց: Անցաւ դարձեալ մի ժամ. ես շուտ շուտ մօտենում էի պատուհանին եւ ականջ դնում: Ականջիս հասնում էին զանգակների զուարթ զողանջիւնները, նաեւ հեռու ամբոխի աղմուկը. եկեղեցին մեր տնից կէս վերստաչափ հեռաւորութեան վրա էր:

Այդ միջոցին տանը արդէն սկսվել էին կամաց կամաց թաթախման ընթրիքի պատրաստութիւնները տեսնել. սեղան էին բացում մեր մեծ դահլիճում ու սկուտեղով կերակուրները դարսում: Տեսայ ինչպէս դահլիճի լոյսը աւելացաւ եւ դռանը աւելի մօտենալով ներս նայեցի: Այնտեղ, սեղանի վրա, շատ գեղեցիկ, համեղ ու ախորժելի ուտելիքներ էին դրված, ամէն մինը իր վայելուչ տեղում: Դահլիճն էին բերում ծաղկամաններով ծաղիկները եւ ես այդ վայրկեանին զգացի հիացմանի սուր հոտը:

Ցանկարծ մի ինչ որ հին, մոռացված ժամանակների, բայց եւ այնպէս շատ հաճելի ու դուրեկան զգայմունք արթնացաւ սրտիս մէջ: Մինչեւ անգամ մի տեսակ տարօրինակ դրութեան մէջ էի, պարզ զգալով, որ այդ վայրկեանին թօթափում եմ ինձնից մի ինչ որ ծանրութիւն: Այդ ծանրութեան ընտելացած լինելով, առանց դրան ես կարծես լաւ չէի զգում ինքս ինձ:

Ահա ես դարձեալ պատուհանի մօտն եմ, խփեցի ու լայն բացի պատուհանը: Նոր սկսվող գարնան սառն օդը խփեց երեսիս. զգացի նոր բողբոջել սկսող տերեւների նուրբ հոտը: Մութ եւ աստղալից երկնակամարը՝ կախված գետնի վրա՝ մետալական ցոլք էր արձակում ոչ հեռու գտնվող գետի մակերեւոյթի վրա: Գլուխս պատուհանից դուրս հանեցի: Հեռուում վառվում էին ցոլուն կրակներ—այդ լուսաւորված եկեղեցին էր. կուպրով լի վառված տա-

Այնուհետեւ յօդուածագիրը յիշատակում է Կայսր Ալէքսանդր III-ի արձանը, որ դրված է Թէոդոսիայում եւ որի կառուցման մէջ Այվազովսկին եռանդուն մասնակցութիւն է ունեցել, յիշատակում է պատկերների այն գալերէան, որ իր սեփական միջոցներով հիմնել է նկարիչը եւ որի մասին մենք արդէն խօսել ենք։ Այսքան բեղմնաւոր գործունէութիւնը իրաւունք է տալիս յօդուածագրին ասել, որ Այվազովսկին իբրեւ մարդ եւ հասարակական գործիչ չունի իր նմանը ներկայումս։ Նկարչին ողջունել է ռուսաց մեծ բանաստեղծ Պուշկին իր մահից 3 ամիս առաջ, երբ իր կնոջ հետ 1837-ին այցելեց ուսումը նոր վերջացնող նկարիչների պատկերահանդէսը։ Գիտենք որ Այվազովսկին Գոգոլի, երաժշտագէտ Գլինկայի եւ բանաստեղծ Մայկովի բարեկամն էր եւ պահպանում էր իր մէջ երեւնական ու քառանական թեականների արագիցիաները, ուստի նա էլ պատկանում է այն փայլուն համաստեղութեան, որ այնքան անմոռանալի է ռուս հասարակութեան համար։

«Այվազովսկին չի մեռնի մեր մէջ»—ասում է յօդուածագիրը։ Եւ անշուշտ, այդ անմահութիւնը միայն վրձինը չէ վաստակել նրա համար, այլ եւ մաքուր ու բարի սիրտը։ Մարդկային կեանքի ամենամեծ զարդարանքը դա է, այդ սիրտը...

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Էդմոնդո դէ-Ամիչիս. Փոքրիկ Թմբկահարը. Թարգմ. Զ. Թիֆլիս, 1899 թ., 14 երես, գինը 3 կոպ.։

«Փոքրիկ Թմբկահարը» տաղանդաւոր զրոյց է եւ կարդացվում է մեծ ոգեւորութեամբ։ Նիւթը վերցրած է իտալացիների եւ աւստրիացիների պատերազմի ժամանակից։ Մի տասնուչորս տարեկան երեխայի հերոսութեան պատմութիւնն է այդ։ Թարգմանութիւնը լաւ է եւ զերծ մեր թարգմանութիւնների մեծ մասին յատուկ սխալներից, եթէ չը հաշուենք ոճոռք (օճորք?) բառը, որ թարգմանիչը գործ է ածել տանիք խօսքի տեղ, մինչդեռ ժողովրդական լեզուում այդ բառը կը նշանակէ առաստաղ։ Տպագրական սխալներ բաւական շատ կան։

II

Էմիլ Զոլա. Երկու մահ. Թիֆլիս, 1899 թ., 28 երես, գինը 5 կոպէկ։

Տիւոը մտքեր է ներշնչում Զոլայի «Երկու մահ» զրոյցը։ Փողապաշտ տիկին Ժիրարը մահվան անկողնում միայն իր թողնելիք հարստութեան մասին է մտածում։ Նրա հոգեվարքը թունաւորված է այդ մտածմունքներով, եւ նրա մահից յետոյ որդիների մէջ կատաղի թշնամութիւն է սկսվում նրա թողած ժառանգութեան առիթով։ Միւս կողմից թշուառ Մօրիսօների միակ զաւակը մեռնում է աղքատութիւնից եւ նոյն աղքատութիւնը ժամանակ չէ տալիս խեղճ ծնողներին նոյն իսկ սուգ պահելու իրանց սիրելի զաւակի վրա։

Փողը մեռցնում է հոգին. ծայրայեղ աղքատութիւնը խեղդում է հոգին. հանդէս են գալիս մարդ-գազանը եւ մարդ-անասունը։ Արդեօք երկար պիտի շարունակվի այդպէս...

Թարգմանութիւնը անաջող է եւ տպագրութիւնը անհոգ։

III

Ալֆոնս Դոդէ. I Պապի ջորին. II Վերապատուելի հայր Գօշէրի ցքին., թարգմ. ֆրանսերէնից Պ. Վարժապետեան. Թիֆլիս, 1900 թ., 43 երես, գինը 10 կոպ.։

Պ. Վարժապետեանի թարգմանած զրոյցները վերցրած են Ալֆոնս Դոդէի «Նամակներ իմ ջրաղացից» ընդհանուր վերնագիրը կրող զրոյցներից եւ ներշնչված են հեղինակին յատուկ հրաշալի հումորով։ Թարգմանված զրոյցների նիւթը վերցրած է կղերական կեանքից։ Թարգմանիչը, ինչպէս երեւում է, լաւ գիտէ հայերէն եւ ունի բառերի հարուստ պաշար, բայց դեռ անփորձ է։ Թարգմանութեան լեզուն կոկ չէ եւ տեղ-տեղ նոյն իսկ լի անհարթութիւններով։ Սակայն, չը նայելով դրան, զրոյցները կարդացվում են մեծ հետաքրքրութեամբ։ Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Ապրիլի 18-ին

Բագուի «Ինտելիգենտ» աւազակները կարող են ուրախանալ, որ համեստ, աղքատ եւ յետ ընկած Ալէքսանդրօպօլում անգամ գտնվում են իրանց արհեստին պատկանող մարդիկ, այնտեղ, ուր բայի առատ ցեխից ու փոշուց ոչինչ չը կայ, ուր Բագուի ոսկիների պատմութիւնը պղնձէ քաղաքի եւ արեւելեան հէքիաթների յափշտակութեամբ է լսվում։ Բայց չէ՞ որ մեր «ազնիւ» յատկութիւնները միշտ մեզ հետ կը մնան ուր էլ որ գնանք, որտեղ էլ որ լինենք։ Ունենք վիշկաներ, ստորերկրեայ նաւթային խողովակներ, որոնց միջից կարելի լինէր նաւթ գողանալ, բայց դրանց փոխարէն ունենք երէցփոխական պաշտօններ, Աստուածածնի խորան, աղքատանոց, որոնց հարստութիւնն ու ունեցածը գողանալու համար, փառք Աստուծոյ, այնքան դժուարին աշխատանք էլ հարկաւոր չէ, ինչքան դա պահանջվում է «անհիւրասէր եւ ապերախտ» Բագուում։

Վերջին օրերս մեզանում շատ են խօսում մի գողութեան մասին, որ իր տեսակի մէջ միակն է։ Երեւակայեցէք, ընթերցող, այստեղի մի բաւական աչքի ընկնող վաճառական իր աներոջից մի տուն գողացաւ։ Ինչպէս, անշուշտ կը հարցնէք դուք, տունը ինչպէս կարելի է գողանալ. տուն ասած բանը խոմ փող, ոսկի եւ մինչեւ իսկ նաւթ չէ։ Բայց հաւատացէք, որ մեր ասածը կատակ չէ։ Մի յայտնի ընտանիքի մայր, որի բոլոր որդիները բացակայ էին քաղաքից, մի առաւօտ վերկենալով՝ կամենում է մտնել խոհանոց եւ նրան կից միւս սենեակները, բայց նրա մուտքը արգելում է մի պատ, որ դիւթական զօրութեամբ գոյութիւն էր ստացել նախընթաց գիշեր։ Ինչպէս պատմում են, խեղճ կինը անսպասելի պատահմունքը երկրաշարժին է վերագրում եւ օգնութեան է կանչում իր բարեկամներին։ Ի՞նչ դժուարութեամբ են կարողանում հաւատացնել միամիտ տիկնոջը, թէ սա երկրաշարժի գործ չէ եւ թէ սա մի գողութիւն է, կատարված իր փեսայի ձեռքով։ Գործը դատաստանի է յանձնված։ Եւ այսպէս քանի՞ քանիսները... Հոգեբանօրէն շատ ճիշդ է բացատրվում այն առածը, թէ ձուի գողն է ձիու գող դարձել։ Այո՛, ճիշդ է, եկեղեցին թալանող հրէշ աւազակը իր գողութեան գործը նախ ձուաներից է սկսել, հարատահարիչ վամպիրը իր կաշառքները նախ ձուաներով է սկսել։ Մի ակնավառ ոսկերիչ ունէինք, որը տասից աւելի անգամ բռնվել էր կեղծ ոսկի եւ արծաթ չինելու յանցանքի մէջ, բայց վերջը մեր հասարակութիւնը, իբրեւ վարձատրութիւն՝ այդ աւազակին հասարակական մի շատ չաղ պաշտօն յանձնեց։ Ինչո՞ւ է այսպէս, կը հարցնէք. «Էհ, մի եւ նոյն է եղբայր, կը պատասխանեն ձեզ, ո՞ւմ անենք, որ չուտեն, որը լինի պէտք է ուտէ, գողանայ. թող մի քիչ էլ սա հաւաքէ». եւ այսպէս են դատում ու մտածում մինչեւ անգամ մեր «երիտասարդ ու թարմ» անձնաւորութիւնները։

Եւ ամենից աւելի ահա այս կարճ պատասխանն է, որ սարսափեցնում է մեզ. այս հարցի եւ պատասխանի մէջ է պարզվում այն անամօթ լոգիկան, որով պաշտպանվում է ալէքսանդրօպօլեցին, որը դեռ այնքան թուք ու ամօթ պիտի բերէ մեր երեսին։

Բայց միթէ իրօք ամենքն են այսպէս գող, աւազակ։ Ոչ, կը պատասխանենք մենք։ Ալէքսանդրօպօլի ժողովուրդը առաքինութիւնների եւ չարութիւնների երկու ծայրայեղութիւններ է ներկայացնում։ Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 27-ին

Ինչքան էլ շատ լինեն հայերի պակասութիւնները, չէ կարելի ասել թէ մենք զուրկ ենք այնպիսի յատկութիւններից, որոնք յատուկ են կուլտուրական ազգերին։ Գոնէ այդ տպաւորութիւնն է թողնում մարդու վրա հանգուցեալ Ենովք Բուդաղեանի կտակը. դա իսկ ամէրիկացու կտակ է։ Ափսոս, որ հայը չէ վերցրել ամէրիկացու եւ մի ուրիշ գեղեցիկ կողմը. ամէրիկացին սիրում է իր կենդանութեան ժամանակ, իր աչքերով տեսնել իր բարի գործերի պտուղը... որ ամենամեծ բարոյական բաւականութիւն է մարդու համար։

Զարմանալի է, որ մի մարդ, որը մեծ ուսում չունէր, կարողանում է ըմբռնել «բարեգործութեան» նպատակը, կարողանում է այնքան յիշատակներ թողնել իրանից յետոյ։ Կարդացէք հանգուցեալի կտակը եւ տեսէք... հայ մարդը չէ մոռացել ոչինչ, որ իր սրտին մօտ է.—ոչ իր հօր յիշատակը, ոչ իր ծննդավայրը, ոչ այն քաղաքը, որտեղ հարստացել է, ոչ հայի սրտին մօտ սրբութիւնները, ոչ ուսումնարանները, ոչ աղքատ օրիորդներ, ոչ չքաւոր ուսանողներ եւ ով, զարմանք... ոչ հայ գրականութեան ծառայողներին։ Մոռացել է միմիայն հայ թատրօնը... ներողութիւն, չէ մոռացել... այլ չէ իմացել, որ կարելի է եւ հայ թատրօնին էլ մի բան թողնել։

Ութ տարի սրանից առաջ «Մշակի» էջերում ես մի հրաւէր կարդացի հայ բարեգործներին, որ չը մոռանան իրանց կտակներում եւ հայ թատրօնը։ Դրանից յետոյ միայն մի մարդ, հանգուցեալ Պողոս-բէգ Լալայեանց, իր վաղամահ եղբայր Սմբատ-բէգի յիշատակին խոստացաւ 5000 բուբլի հայ թատրօնին. բայց այդ գումարը հանգուցեալը չը գիտէր որտեղ մըցնել, ինչպէս չը գիտեն եւ ժառանգները, որոնք անպատճառ ցանկութիւն ունեն թէ իրանց խօսքը կատարած լինել, թէ յաւերժացնել հանգուցեալ Սմբատ-բէգի յիշատակը, որը ջերմ երկրպագու էր հայ թատրօնին։

Այժմ մենք հաստատ աղբիւրներից իմացել ենք եւ կարող ենք յայտնել, որ ամեն ցանկացող կարող է կտակել ցանկացած գումար յանուն տեղական թատրօնի, մտցնելով գումարը քաղաքային վարչութեան կասսան, իսկ քաղաքային վարչութիւնը կը վարվի այդ գումարի հետ այնպէս, ինչպէս տնօրինել են կտակողները։

Ահա օրինական եւ ապահով ճանապարհը։ Հաւատի ենք, որ հայ հասարակութիւնը այնքան ըմբռնել է թատրօնի կրթիչ նշանակութիւնը, որ մեր ձայնը «Զայն բարբառոյ յանապատի» չի մնայ։

Դերասան Գ. Պետրոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, ապրիլի 18-ին

«Մշակի» № 46-ի մէջ մի թղթակցութիւն էր տպված, որի մէջ թղթակից Ց., պատմելով կալուածատէր Ս. Ա-ի կնոջ մահը, բաթումցիներին խրատ է տալիս չենթարկվել զանազան Աբիկ էֆէնդիների խնամքին։ Այդ առիթով պարտք եմ համարում ասել, որ ես Ս. Ա-ի կնոջ ոչ դեղ եմ տուել եւ ոչ էլ նրա հիւանդութեան մասին տեղեկութիւն եմ ունեցել։ Ս. Ա-ի կնոջ բժշկողները եղել են տեղիս առաջնակարգ բժիշկները։ Բաթումի հասարակութիւնը 25 տարիներից ի վեր, իմ անձնաւորութիւնը լաւ ճանաչած լինելով, Ց-ի պէս մարդկանց խօսքերին կարեւորութիւն չի տայ։

Ա. Ճեռահեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ ենթադրութիւն կայ վերաքննել ձրի ընթերցարանների գրացուցակը։ Լուրերին նայելով՝ սակաւաթիւ գրքեր աւելացնելու հետ միասին լինելու են նրա մէջ շատ նշանաւոր կրճատումներ։ Այսպէս, ի նկատի կայ բոլորովին դուրս գցել ցուցակից այն գրքերը, որոնց զանազան ժամանակ հաւանութիւն է տուել մինիստրութիւնը եւ որոնք մտնելով միջնակարգ դպրոցների աշակերտական գրադարանի ցուցակի մէջ, մտել են նոյնպէս եւ ձրի ընթերցարանների գրացուցակը, որպէս օգտակար կամ անվնաս գրքեր իրանց բովանդակութեամբ։ Այժմ այդ գրքերը ճանաչվում են անհամապատասխան այն ընթերցողների մտաւոր զարգացման եւ հասկացողութեան, որոնց համար հիմնվում են ձրի ընթերցարանները։

—

Հինգշաբթի, ապրիլի 27-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ հետեւեալ դէպքը։ Երդուեալ հաւատարմատարի օգնական Ի. Ախումով, ցեղակելով դէպի ինձ։

—Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի, պատասխանեցի այնքան պարզ, որ մինչեւ անգամ չը հասկացաւ նա ինձ, միայն աւելացրի ծիծաղելով—ձեր կրակոտ եւ գեղեցիկ աչքերի ազդող շանթերը զուր կերպով միք չտայի, դրանք այժմ ոչ մի ծառայութիւն չեն մատուցանի ձեզ, ես արդէն առողջ եմ, եւ այն էլ կատարելապէս առողջ, Manon։

—Աւելի լաւ, ասաց Manon-ը եւ բարձրաձայն ծիծաղեց։

Manon-ը իսկապէս շատ լաւ սիրտ ունէր, եւ իր պարտքն էր կարծես միայն վճարում հրապուրիչ ու առանց բացառութեան ամենին ես դուր եկող աչքերից իր կախարդիչ սլաքները արձակելով այս եւ այն կողմը։

Թէ ինչպիսի իսկական տօն էր այդ օրը մեր ընտանիքի համար, պատմել չեմ կարող։ Սեղանի վրա ես բարձրաձայն պատմում էի իմ փոքրիկ բոմանի մանրամասնութիւնները։ Manon-ը երբեմն փոքր ինչ կարմրում էր, ամենքը ծիծաղում էին, նա էլ միւսների հետ եւ ամենքս էլ շատ ուրախ էինք։ Ես եւ Manon-ը մնացինք միշտ լաւ բարեկամներ։ Մի շաբաթից ես դարձայ քաղաք, աջող կերպով անցայ թողած դասերս, հասայ ընկերներիս եւ կատարելապէս արդարացրի ուսումնարանի վարչութեան եւ ծնողներիս ինձ վրա դրած յոյսերը, ես ստացայ ոսկէ մեդալ։

Բ ա գ ո ւ. Կ.

կառներից կրակէ լայն լեզուներ էին բարձրանում դէպի երկինքը։ Լսվում էին հրացանների թնդիւնները մինը միւսի ետեւից—այդպէս էր սովորութիւնը։ Արիւնը երակներիս մէջ կենդանութիւն ստացաւ եւ նոր հոսանքով սկսեց վազել. մի ինչ որ ներքին ոյժ ինձ սենեակից դուրս էր մղում։

Մի ինչ որ անհասկանալի ուրախութեան տենդային դրութեան մէջ մի վայրկեանում վերցրի գլխարկս եւ դուրս թռայ պատուհանից։ Պատուհանը մեր տանը կպած փոքրիկ պարտէզն էր դուրս գալիս. ահա եւ պարտէզի փոքրիկ դռնակը, ապա եւ ճանապարհը եւ ես եկեղեցու ուղղութիւնը բռնած՝ ուղղակի վազէվազ էի գնում։ Ցուզմունքս քանի գնում աւելի եւ աւելի էր սաստկանում. շտապում էի, կարծես երկիւղ կրելով, թէ ահա մի բան բաց կը թողնեմ—մի ինչ որ բառեր, որոնց ես անպատճառ կամենում էի լսել։

Ահա եւ եկեղեցու բագը. ահագին ամբոխը խռնվել է բագում, ամենի երեսը փայլում է ուրախութիւնից։ Երկու կարգ կանգնած են կանայք զանազանագոյն թղթէ լամպարներով վառ մոմերը հանգչելուց պաշտպանելու համար ձեռներին, առաջները դրած զատկական նազուքներ եւ՝ զանազան տեսակ կերակուրներ ու սպասում են քահանայի գալուն, որ այդ ամենը օրհնէ։

Եկեղեցու ներսից լսվում է գիւղական երգեցիկ խմբի երգեցողութեան ձայնը. այդ ձայնը քանի գնում աւելի եւ աւելի է մօտենում. ահա երեւում է եւ քահանան՝ հագին բաց դունաւոր տօնական շուրջառը, իսկ նրա ետեւից միմեանց սեղմելով ահագին ամբոխը։ Դա եկեղեցու շուրջը կատարվող թափորն է։

Ես սկսեցի սրան նրան սեղմելով աւելի ներս մտնել աշխատել. ինձ ճանաչում էին եւ ճանապարհ տալիս։ Սրտիս սաստիկ բաբախմունքով եւ ուրախութեան կրակից ցոլացող աչքերով սկսեցի շուրջս փնտռել իմ քոյր Նադիային։ Սաստիկ փափագում էի գտնել նրան եւ ասել... օ, ես չը գիտէի թէ ինչ պէտք է ասէի նրան։ Ես ագահութեամբ աշխատում էի ճշդութեամբ, առանց եւ մի բառ թողնելու լսել երգեցողութիւնը, եւ սրտիս մէջ հընչում էին «գրկախառնվենք, համբուրվենք, եղբայրներ, սուրբ Յարութեան շնորհիւ ներենք մեր թշնամիների մեղքերը եւ այնպէս կրկնենք —«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»...

«Միմեանց գրկենք... գրկենք»...—կրկնում էին իմ շրթունքներս եւ ես փնտռում էի քըրջս, որ կարողանամ շուտով գրկել եւ ասել. «ներիր», որովհետեւ զգում էի, որ սաստիկ մեղաւոր եմ նրա առաջը։

Ահա եւ նա. նա պատահաբար բաժանվել էր միւսներից. հայրս եւ Manon-ը գալիս էին ետեւից բաւական հեռու, վրա ընկայ եւ բռնեցի նրա ձեռքը։

—Նադիա։

—Դո՛ւ, դու այստեղ։

—Նադիա, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Մենք միմեանց գիրկն ընկանք։

—Նադիա, ներիր, ներիր ինձ...

—Ի՞նչ ես ասում. ինչ բանովն ես մեղաւոր որ ներեմ, դէպի ինձ ոչինչ...

—Ո՛չ, արել եմ... արել եմ շատ բան, որի համար ներողութիւն եմ խնդրում, ես քո առաջդ սաստիկ մեղաւոր եմ. բայց այդ ամենը անցաւ գնաց։ Այո՛, այո՛, ես վաղուց տեսնում էի, որ դու ամեն բան գիտես. ո՛հ, այժմ որքան լի սրտով ծիծաղում եմ ինքս ինձ եւ ն ր ա վրա... լսում ես, Նադիա...

«Միմեանց գրկենք»... եթէ դու գիտենայիր, Նադիա, թէ որքան եմ կամենում գրկել ամենքին, ամբողջ աշխարհը։ Սիրել ու բարի անել ամենին։ Այո՛, ն ա, այդ մեր ամենից սիրելի Manon-ը, սաստիկ անգութ էր։ Նա ինձ հետ սիրային խաղեր էր խաղում, իսկ ես յիմար էի հինգ տարեկան երեխայի նման։

Միթէ այդ սէր է, Նադիա, թանկագին քոյրիկս, միթէ դա այնպիսի սէր է, որի համար արժենար անձնասպանութիւն գործել. եւ որ ամենագլխաւորն է—արժէր դրա համար այդչափ խորը վիրաւորել քեզ, քեզ, որ իմ ամենալաւ բարեկամն ես. ոչ, ոչ, ահա իսկական սէրը—ես այժմ սիրում եմ մարդկանց, ահա այս ռամիկ ամբոխին եւ բոլոր միւսներին, բոլորին, որքան որ կան երկրիս վրա... ահա այս սէրը լցնում ու բաւականութիւն է տալիս իմ սրտիս. օ, Նադիա... պաշտելի քոյրիկս... ես այժմ բոլորովին առողջ եմ։ Եւ ես ինքս էլ չիմանալով թէ ինչո՞ւ, ինչ պատճառով համբուրվում էի ամենի հետը, ով էլ որ եւ պատահում էր։ Ամբողջ մարմնով այրվում էի մի ինչ որ նոր, ինձ ամբողջապէս կլանող սիրով դէպի բոլոր մարդիկը։

Տանը պատահեցի Manon-ին։

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց,—ասաց նա ինձ՝ իր գեղեցիկ աչքերով սուր սլաքներ արձակելով դէպի ինձ։

րեկվայ ժամի 12-ի մօտերքը, գնում է իր խորթ մօր մօտ եւ մի կարճ, բայց սուր վիճաբանութիւնից յետոյ, վիրաւորում ատրճանակի մի քանի հարուածներով իր մօրը, իսկ յետոյ իրան։ Երկուսն էլ տարված են Միքայէլեան հիւանդանոց։ Երիտասարդ Հախումով նոր էր հաստատվել մեր քաղաքում։ Նա վերջին ժամանակները կարել էր յարաբերութիւնը իր հօր տան հետ։ Հայրը, Մատթէոս Ախումով, մեռաւ ներկայ ապրիլի սկզբին։ Որդին այդ ժամանակ բացակայ էր քաղաքից։ Վերադառնալով քաղաք, նա մի քանի անգամ այցելեց մօրը եւ վերջին այցելութեան ժամանակ հրաւիրել էր իր մօտ հիւր, բայց մայրը չէր գնացել սուգի պատճառով։ Երիտասարդի վերքը վտանգաւոր է. մայրը ստացել է մի քանի վերքեր, որոնք, սակայն կարող են բժշկվել։

—

Պեսական բանկի Անդրկովկասեան բաժանմունքները եւ գրասենեակները, նոյնպէս եւ նահանգական եւ գաւառական գանձարանները ֆինանսների մինիստրութիւնից կարգադրութիւն ստացան ընդունելու զանազան արժէքի ծակ դրամներ։ Ընդունող հիմնարկութիւնները 1 ռուբլիանոց ծակ դրամի տեղ պէտք է վճարեն 65 կ., 20 կոպէկանոցի տեղ՝ 6 կ., 15 կոպէկանոցի տեղ՝ $4^1/_2$ կ., 10 կոպէկանոցի տեղ՝ 3 կ. եւ 5 կոպէկանոցի տեղ՝ $1^1/_2$ կոպէկ։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են. «Մոսկվայի հայ գաղութը պատուիրեց մի չքեղ պսակ դնել հանգուցեալ ծովանկար Յովհաննէս Այվազովսկու գագաղի վրա։ Ապրիլի 23-ին, հայոց եկեղեցում նրա յիշատակին հոգեհանգիստ կատարվեց։ Կուզնեցկի կամրջի վրա գտնվող խանութները ի ցոյց էին դրել հանգուցեալի պատկերներից եւ լուսանկարը»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մեզ մօտ մարդասպանութիւնները, աւազակութիւնները սովորական կարգերի չարքն են անցել։ Գիշեր չի անցնի, որ մէկի կամ միւսի ատնից իր չը գողացվի կամ խանութների, գրասենեակների դռները ամենաճարպիկ կերպով չը բացվեն ու չը կողոպտվեն։ Իսկ մարդասպանութիւնները նոյնպէս անպակաս չեն։ Անցեալներում մի ինչ որ թիւրք, յայտնի սրիկայ, ատրճանակի մի հարուածով սպանեց մի ստորին ոստիկանի։ Սպանումից յետոյ, չարագործը իր համար փախուստի տեղ էր ընտրել թիւրքական սահմանը, լաւ իմանալով, որ ամեն մի չարագործ իր համար ազատ ապաստան կարող է գտնել այնտեղ։ Բայց այդ նրան չաջողվեց. սահմանագլուխից ձերբակալած բերին նրան այստեղ, ուր այժմ բանտարկված է։ Նորերս էլ սպանվեց Աւագ Մալխասեան անունով մի տան եւ եօթ տարեկան պատանի, որը զոհ գնաց տմարդի եւ ստոր վրէժառութեան։ Ինչպէս ասում են, սպանողը ինչ որ թշնամութիւն է ունեցել զոհի մեծ եղբօր հետ եւ այդ պատճառով դահճի պաշտօն է կատարել՝ անմեղ արիւն թափելով»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Տիրանի գիւղում հայոց եկեղեցի կառուցանելու հարցը առաջ է գնում։ Արդէն պատրաստ է եկեղեցու պլանը, որ ձրիաբար կազմեց երկրաչափ Զ. Գէորգեան։ Գործի նախաձեռնող Գրիգոր քահանայ Մատինեան չուտով առաջարկելու է պլանը Թիֆլիսի կոնսիստորիային»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Յայտնի է, որ Բաթումի շրջակայքում, նոյնպէս եւ քաղաքի շատ մասերում ճահճային տեղեր շատ կան, որոնք թունաւորում են օդը եւ մեծ վնաս են պատճառում քաղաքի բնակիչներին։ Ճահճային օդը աւելի վատ ազդում է ամառային տօթերին։ Այդ պատճառով հրաւիրված են մասնագէտներ՝ չորացնելու ճահճային տեղերը։ Աշխատանքները արդէն սկսվել են եւ յոյս կայ, որ մեր քաղաքը չուտով կազատվի այդ վնասակար ճահիճներից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՖՐԻԿԱՑՈՒՄ

—

«Ամերիկան—ամերիկացիների համար», Մոնրոէին հետեւելով կրկնում են եանկիները. «Աֆրիկան—աֆրիկանդէրների համար»—հետեւելով եանկիներին, կրկնում են աֆրիկանդէրները։ Եւ դրանք դատարկ խօսքեր չեն. եւրոպացիների հեղեղից եւ եւրոպական պետութիւնների անընդհատ ոտնձգութիւններից ազատվելու համար՝ թէ Ամերիկայում եւ թէ Աֆրիկայում ստիպված են հետեւելու որոշ քաղաքականութեան, որին իրրեւ նշանաբան ծառայում են յիշված խօսքերը։ Բայց պէտք էր հարցնել եանկիներին եւ աֆրիկանդէրներին, թէ ով է իսկական ամերիկացին եւ ով է իսկական աֆրիկացին։ Ո՞ւր են ամերիկացի հնդիկները, Ամերիկայի իսկական տէրերը, որոնց այն ասիճան հիմնաւոր կերպով ջնջեցին եանկիները, որ մի հետք անգամ չը մնաց նրանցից. ո՞ւր են Մեքսիկայի բնիկները, կարելի է այժմ նրանցից գտնէ մի նմուշ գտնել Մեքսիկայի որ եւ է անկիւնում։ Ի հարկէ, ոչ. եւրոպացու «սրի եւ արիւնի» քաղաքականութիւնը վաղուց ջնջել է նրանց աշխարհի երեսից։ Նոյն «արիւնի եւ սրի» քաղաքականութիւնը գործադրվում է եւ այժմ, մեր օրերում, Աֆրիկայի բնիկների վերաբերմամբ. եւ հեռու չէ, գուցէ, այն ժամանակը, երբ աֆրիկացի մի խափշիկ գտնելու համար հարկաւոր կը լինի մտնել Միջին Աֆրիկայի խորքերը, եւ ինչպէս հալածվող ու անխնայ կոտորվող անասնական ցեղի վերջին մնայորդի, դուրս քաշել նրանց իրանց որջերից։ Եւրոպացին այժմ ամենանգութ կերպով կոտորում է տեղացի բնիկներին եւ ի լուր աշխարհի հռչակում, թէ ես «քաղաքակրթութիւն» եմ տարածում Աֆրիկայում։ Անշուշտ, կասէք դուք, եւրոպացին մեղաւոր չէ, որ խափշիկը չէ կարողանում դիմանալ գոյութեան կռուին, չէ կարողանում յարմարվել ներկայ պայմաններին եւ բնականաբար դատապարտված է ոչնչանալու, տեղի տալու աւելի զօրեղի, աւելի յարմարվողի առաջ։ Ուղիղ է. բայց տեղ գրաւելու համար՝ անհրաժեշտ է արդեօք, որ գերմանացիները խմբերով կախաղան բարձրացնեն Աֆրիկայի բնիկներին Կամերունում, անհրաժեշտ է արդեօք, որ ֆրանսիացիները ամբողջ գիւղեր այրեն եւ սրի անցկացնեն Նիգերի վերին ընթացքում։ Աֆրիկան դեռ եւս շատ ընդարձակ է եւ ամենի համար տեղ բաւական կայ։ Եւ ինչ է նշանակում խմբական կոտորածների այդ անգութ քաղաքականութիւնը փարիսեցաբար «քաղաքակրթութեան տարածումն» անուանել։

Բրիւսէլի «Petit Bleu» լրագրի թղթակիցը նորերումս այնպիսի փաստեր հաղորդեց Կոնգոյից, որոնց առանց զարհուրանքի անհնար է կարդալ։ Այսպէս այդ թղթակիցը—Պոլ Կուրեր—հաղորդում է. «Անասելի անգթութիւններ են կատարվում Կոնգոյում կաուչուկի առեւտրի ժամանակ։ Երբ տեղացիները կաուչուկ են բերում, զինուորները շրջապատում են նրանց եւ առնում կողոպտները։ Երբ կշռելու ժամանակ երեւում է, որ կողովով կաուչուկը 5 կիլոգրամից պակաս է քաշում, իւրաքանչիւր կիսատ կողով բերող խափշիկի 100 հարուած են տալիս փայտով, իսկ լի կողով բերողին՝ շորեղէնի մի կտոր կամ մի այլ առարկայ, իբրեւ վարձ։ Եթէ 100 եկողներից միայն 50-ն են կաուչուկ բերել, այն ժամանակ վերջիններին բռնում են, իսկ մնացեալ 50-ին կոտորում են սրերով եւ նրանց գիւղերը հրդեհում։ Ճանապարհին նուաճած խափշիկներին դարձնում են օգնական զօրք, զինաւորում են նրանց տէգերով եւ բաց են թողնում տեղացիների վրա՝ թոյլ տալով նրանց բաւարարութիւն տալ մարդակերութեան հաճոյքին եւ ուտել սպանված թշնամիների միսը»։ Թղթակիցը առաջ է բերում այն արձանագրութեան պատճէնը, որ կազմել է Մօրուլ դատաւորը։ Այդ արձանագրութեան մէջ գրված են երկու սերժանտի եւ երկու զինուորի ցուցումները։ Նրանք վկայել են, որ Վան-Էյկէն գործակալը, Նգոզո գաւառի կառավարիչը, հրամայել է այրել բոլոր գիւղերը, սկսած Ամբաոյից մինչեւ Նգբօ, եւ նրանց մէջ ապրող բոլոր տղամարդկանց, կանանց եւ երեխաներին կոտորել, մի եւ նոյն ժամանակ սպանված տղամարդկանց գլուխները ցցերի անցկացնել։ Բացի դրանից նա հրամայեց կտրել սպանվածների ձեռքերը եւ մարմնի ուրիշ մասերը, իսկ կանանց եւ երեխաներին խաչաձեւ ձեւել ցցերի վրա։ Մի այլ արձանագրութիւն պարունակում է իր մէջ վեց զինուորի ցուցումները։ Նրանք վկայում են, թէ Վան-Էյկէն իր ձեռնափայտը 10 սանտիմետր խորութեամբ մխեց մի տեղացի ցեղապետի մէջքը նրա համար, որ նա չը կարողացաւ պատասխան տալ գործակալի հարցին մի կորած հրացանի մասին։ Ցետոյ այդ ցեղապետին, փախչելու փորձ անելու համար, հրացանազարկ արին, գլխատեցին եւ գլուխը ցցի անցկացրին։ Ապա Վան-Էյկէն հրամայեց չրջապատել այդ ցեղապետի գիւղը, կոտորել նրա բնակիչներին եւ իրան ներկայացնել կոտորածների ձեռքերն ու գլուխները՝ սպառնալով սերժանտներին դուրս անել ծառայութիւնից, եթէ նրանք չը կատարեն գործակալի հրամանը։ Թղթակիցն աւելացնում է, թէ Վան-Էյկէն իր «գործունէութիւնն» սկսել է իբրեւ քահանայ Ստատլի ալժիրական միսիայում, եւ զեկուցումներ է կարդացել Լիվենի հաւալարանում սարկութեան դէմ... Բայց ամենից զարմանալին այն է, որ երբ Կոնգոյում գործած անգթութիւնների լուրը հասաւ Բելգիա եւ բելգիական պարլամէնտում հարց առաջարկվեց մինիստրութեանն այդ մասին, արտաքին գործերի մինիստր Ֆավերոն նախ փորձեց հերքել այդ փաստերը եւ ապա, երբ բռնեցին նրա ստախօսութիւնը, յայտարարեց, թէ կառավարութիւնը պատասխանատու չէ Վան-Էյկէնի գործած յանցանքների համար եւ մինչեւ անգամ սկսեց գովել Կոնգոյի վարչութիւնն, ասելով, թէ նա քաղաքակրթութիւն է տարածում...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Standard» լրագրի Բերլինի թղթակիցը գերմանական թագաժառանգին նկարագրում է իբրեւ մի հաւեստ պատանու, որ ոչ ոքի եւ ոչ մի ժամանակ, մինչեւ անգամ իր եղբայրներին, առիթ չէ տալիս զգալու, թէ նրանք գործ ունեն ապագայ կայսրի հետ։ Անկեղծութիւնն ու քաղցրաբարոյութիւնը կազմում են նրա բնաւորութեան յատկանիշները եւ նրա ամբողջ անձնաւորութիւնը չափազանց համակրական է։ Դասատարակները միաբերան գովում են նրա ընդունակութիւնները, իր անձին տիրապետելու կարողութիւնն ու խելքը։ Նա աւելի զարգացած է, քան բազմաթիւ պատանիներ, որոնք քննութիւն են բռնում հաւալարան մտնելու համար։ Կայսրի ազգեցութեան շնորհիւ՝ թագաժառանգն ու նրա եղբայրները կրթութիւն ստացան ոչ թէ Բերլինում կամ Պոտսդամում, որտեղ նրանք կարող էին շատ զուարճութիւններ ունենալ, այլ Պլենում, որտեղ նրանց պարապմունքներին ոչ մի բան արգելք լինել չէր կարող։ Առողջ թէ մարմնով եւ թէ հոգով՝ թագաժառանգն անշուշտ կարդարացնէ իր ծնողների եւ ուսուցիչների յոյսերը։ Գերմանացի շատ երիտասարդների նման, թագաժառանգը նախ մի տարի կը ծառայէ զօրքի մէջ եւ յետոյ միայն կը մտնի համալսարան։ Վիլհելմ իշխանը սիրում է ամեն տեսակ սպորտներ եւ մեծ հաճութեամբ լեռնային ճանապարհորդութիւններ է կատարում։

—«Русск. Вѣд.» լրագրի թղթակիցը հաղորդում է Լօնդօնից. «Ապրիլի 16-ին լրացաւ լորդ Հէրբէրտ Սպենսերի ծննդեան ութսունամեակը։ Ահա չորս տարի է արդէն, որ նա աւարտել է այն հսկայական աշխատանքը, որին նուիրել էր իր ամբողջ կեանքը։ Այդ ժամանակից նշանաւոր փիլիսոփան իր կեանքի վերջին օրերն անց է կացնում երբեմն բրիտանական թանգարանի մօտ գտնվող փոքրիկ հիւրանոցում, երբեմն Բրայտոնում։ Սպենսէր ամուրի է եւ, կարծեմ, բոլորովին միայնակ մարդ է, առանց աղգականների։ Արտասահմանում նա շատ աւելի վաղ յայտնի դարձաւ, քան Անգլիայում, որտեղ նրա հսկայական աշխատութեան առաջին հատորները սկզբում ոչ միայն կարդացողներ չունեցին, այլ եւ հրատարակողներ։ Սպենսէր առաջ հրատարակում էր նրանց իր հաշուով։ Ցետոյ առաջ եկան եւ հրատարակողներ եւ կարդացողներ եւ յարգողներ։ Մէկը միւսից յետոյ թափվեցին նրա վրա պատուաւոր պարգեւներ—դոկտորական քղամիդներ, դիպլոմներ, շքանշաններ, բայց Սպենսէր շրջարվեց այդ ամենից։ Նա հրաժարվեց նաեւ գերմանական կայսրի կողմից նրա առաջարկած «Pour le mérite» շքանշանից, որ ուրախութեամբ ընդունեց եւ հպարտութեամբ կրում էր Կարլէյլ։ «Ես միշտ միլիտարիզմի դէմ եմ եղել», հեռագրեց նա գերմանական կայսրին։ Այժմ, խորին ծերութեան մէջ, միայնակաց փիլիսոփան հետեւում է քաղաքական անցքերին ամենայն ուշադրութեամբ։ Գրականագէտների եւ գիտնականների բողոքին պատերազմի դէմ ստորագրեց նա ամենից առաջ։ Իր նամակներից մէկում Սպենսէր գանգատվում է, թէ ծերութիւնն արգելում է նրան գործնական մասնակցութիւն ունենալ այն պայքարի մէջ, որ մղվում է պատերազմի եւ միլիտարիզմի մօտեցող ալիքների դէմ»։

—Տրանսվալից եկող գերմանացիները հաղորդում են, թէ Պրէտորիան ամրացրած է Մէցի օրինակով։ Քաղաքը պաշտպանվում է հինգ մարտկոցներով եւ ամրութիւնների սիստէմը ներկայացնում է Լօտարինգիայի բերդի ճիշդ պատկերը։ Բօէրները ենթադրում են, թէ 6,000 մարդով նրանք կը կարողանան պաշտպանել իրանց մայրաքաղաքը թշնամուց, որքան բազմաթիւ լինի նա։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Տարազ» շաբաթաթերթի մէջ մի սմն Ականատես «Կրօնը Ներսիսեան դպրոցում» վերնագրի տակ, մարդասիրների մի կոյտ է շարել, որից մենք չենք կարող մի քանի կտորներ չը բերել, հայերէն լեզուի սիրահարներին հիացնելու համար։ Ահա.

«Ինքս լինելով երբեմն աշակերտ դպրանոցի՝ կամեցայ գէթ կենացս այրութեան հասակում ականատես լինել դամ մի ես սոյն քահանայի արկածալից ուղղութեան անցից յետ շնորհի վախճանին կրօնազիտութեան ուսուցման աւանդման վերաբերմամբ։ Ըստ որում կրօնը աշակերտութեան ժամանակ զարճութեան ու ծիծաղի ժամեր են եղել շնորհիւ դատատու քահանայի, իսկ հարցաքննութեան օրին մի կատարեալ լարիւրոնթոս թէ ներկայ եղողների և թէ քննող սաների համար»։

Կարդացէք և հետեւեալ կտորը. «Ամեն մէկը նրանցից միջնադարեան ուղեղակալ հարց ու պատասխանից զերծ՝ կատարեալ գիտակցութեամբ, աղատօրէն վարդապետում էր Աստծոյ Բանը պարզաբանութեամբ նորը հնի մէջ, ծածկածը և հինը նորի մէջ բացածը. որով Աստուածային գրքի սկզբից մինչև առաքեալների քարոզի վախճանական դարերը հանգիստ կանոններին ակներև պատկերանում էր մի բարոյական-պատմական հշգրիտ շղթայ, որի շնորհիւ պարզ ցոլանում էր իբրև մի ջինջ հայելումը Աստուծոյ թագաւորութիւնը մարդկութեան մէջ, այնպէս որ բոլորը լի աշակերտաց խորիմաստ, հմուտ հաչէտութիւնից գլուխերայ ժամի 12-ին զղացած Նրանց քրիստոնէութեան ընդարձակ պատմութեան իմաստին գիտակ՝ մխիթարած դնացին»։

Տիգրան Նազարեանը, ի հարկէ, էլի կասէ որ մենք հայ գործիչներին հալածող ենք և հէնց այս պատճառով ենք առաջ բերում այս զարհուրելի վատը նրա խմբագրական անգրագիտութիւնից։ Բայց արժէ՞ Տիգրան Նազարեանների մասին մտածել այնտեղ, որ հայոց լեզուն այսպիսի խայտառակութեան է ենթարկվում։ Եւ մի՞թէ չի գտնվի մի բարեբար, որ գտնէ թեմական դպրոցի չորրորդ դասարանի աշակերտներից մէկին ուղարկէ «Տարազի» խմբագրատունը հայերէնի դասեր տալու համար.։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

27 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 27-ին թագաժառանգ Գէօրգի Ալէքսանդրովիչի ծննդեան օրվայ յիշատակի առիթով՝ Պետրո-Պավլովսկի տաճարում հոգեհանգստի պատարագ մատուցվեց Նոցա Մեծութիւնների, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի, Թագաժառանգի եւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովիչի ներկայութեամբ։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Օրանժեան հանրապետութեան կառավարութեան կենտրոնատեղին տեղափոխված է Հէյլբրոն։

ԼԷԳԻ-ՍՄԻՏ։ Բուլէր մի կոչնաթուղթ հրատարակեց, որով յայտարարում է, թէ Նատալի այն բնակիչները, որոնք կը կամենան թողնել բօէրներին, կընդունվեն անգլիացիներից բարեկամաբար։ Ով իր ազատ կամքով անձնատուր կը լինի քաղաքացիական իշխանութիւններին, կընդունվի աւելի բարեկամաբար, քան նա, ով այս կոչնաթղթից յետոյ էլ կը շարունակէ կռուել անգլիացիների դէմ։

ՎԵԼԳԵԼԷՆ։ Անգլիական զօրքերը հասան այստեղ՝ առանց դիմադրութեան հանդիպելու։ Բօէրները առաջ թնդանօթներ դրին գետի հիւսիսային կողմում, բայց յետոյ յետ քաշվեցին։

ՏԱԲԱՆՋՈՒ։ Բօէրները գլխաւոր բանակատեղին Լէդի-Բրանտից տեղափոխվեցին Կլօկօլան եւ ուժեղ դիրքեր բռնեցին Մեվկատինեան անցքի մօտ։ Բենդլ եւ Բրաբանտ գրաւեցին այն ռազմական կէտերը, որոնք տիրում են Վենբուրգ-Լէդի-Բրանտի ճանապարհի հարաւակողմում գտնվող շրջանի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Գերմանական թագաժառանգը լորդ-մէրին ուղարկված հեռագրով շնորհակալութիւն յայտնեց Լօնդօնի բնակիչներին նրանց շնորհաւորութիւնների համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Որոշված է բժշկական զննութեան ենթարկել այն ապրանքները, որոնք ստացվում են Զմիւռնիայից։

ՊՕՐՏԻԶԻ։ Հրաբխային ժայթքումը վերջացած է համարվում։

ԼՕՐԷՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Այստեղի մաքսատունը հրաժարվում է ընդունել հաց, միս, չոր եւ կօշիկներ Տրանսվալի համար, համարելով այդ առարկաները զինուորական արգելված ապրանք։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Պաշտօնական։ Անգլիացիները կիրակի օրը առան Ֆօրտինատրիմ։ Ռմբակոծութիւնը ստիպեց դաշնակից զօրքերին յետ նահանջել։

Կրիւգէր հեռագիր ստացաւ մի բօէր կնոջից, որ հարցնում է, թէ ժամանակ չէ՞ արդեօք կանանց զօրաբաժին կազմակերպելու։ Նա պատրաստ է զէնք վերցնել կանանց տղատակամ զօրաբաժնի հետ միասին երկրի անկախութիւնը պաշտպանելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Ապիայի նահանգապետը հեռագրում է. «Տուտոյլէ Կվուխուսով եւ Խօրացասով գաղտնի գործում են թշնամու հետ միասին։ Հեռագրական հաղորդակցութիւնը Պրախսուի հետ ընդհատված է։ Գաղթականութիւնների մինիստրութիւնը անգլիութիւն չէ ստացել, որ հատատաէր Կումասսիի անկումը։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Ազգային ժողովը որոշում կայացրեց, որով ցաւ է յայտնում այն առիթ-

թով, որ Անգլիան չընդունեց խաղաղութեան վերաբերեալ առաջարկները։ Սալիսբիւրիի հեռագրում իրերի դրութիւնը սխալ էր պատմված։ Ազգային ժողովը շնորհակալութիւն է յայտնում պետութիւններին աջակցութեան եւ համակրանքի համար, բողոքում է Ժընեվի կոնվենցիայի խախտման դէմ եւ վերջում լիազօրութիւն է տալիս կառավարութեանը որոշումներ կայացնել հանդամանքների պահանջի համեմատ։

28 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Իսկական պետական խորհրդական Խվոստովին հրամայված է լինել ներքին գործերի մինիստրութեան տնտեսական դեպարտամենտի դիրեկտոր։

ԼՕՆԴՕՆ։ Հեռագիր Զանդ գետից. «Թշնամին, յետ նահանջելով, գրաւեց մի դիրք քսան մղոն տարածութեամբ. անգլիական դիրքը աւելի երկար է։ Մեր կորուստները մեծ չեն։ Հեծելազօրքը եւ արտիլէրեան հալածում են թշնամուն երեք ուղղութեամբ։

ԴՈՒՐԲԱՆ։ Բուլէրի զօրքերի մէջ եռանդուն գործունէութիւն է նկատվում։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Չեմբերլէն հաղորդում է, թէ ներկայ ժամանակում Նատալում գործում է մի կառավարչական յանձնաժողով, որ պէտք է քննէ պատերազմից առաջացած վնասների համար պահանջվող վարձատրութիւնների հարցը։ Վարձատրութիւնները կը հատուցվեն այն պատերազմական տուգանքից, որ առնվելու է թշնամուց։—Բրոդրիկ ասում է, թէ նա չէ ստացել այն տեղեկութեան հաստատութիւնը, որով հաղորդվում էր, թէ Ռուսաստանի եւ Թիւրքիայի մէջ կարծիքների փոխանակութիւն է տեղի ունեցել Ռուսաստանի առաջարկութեան մասին Տենեդոս եւ Բոզոս կղզիներում ածխային կայարան ձեռք բերելու վերաբերմամբ։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Ֆոլկսրատի նստաշրջանը փակված է։

ՎԻԵՆՆԱ։ Կ. Պոլսի աւստրո-ունգարական դեսպանը չունի ոչ լիազորութիւն եւ ոչ առիթ որ եւ է քայլ անելու Իլդիզ-Կիոսկում Պրիզրենի չերնոգորական հիւպատոսական գործի վերաբերմամբ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ, Գ. Բ. Հաղիւ թէ կարելի լինի տպագրել այդ ձեւով. ցանկալի կը լինէր տեսնել շարունակութիւնը, որպէս զի իմանայինք՝ կարողանա՞ինք տպագրել, թէ ոչ։

ԱՍՏՐԱԽԱՆ, Ս. Խ. Ձեր յօդուածը չի տպագրվի. «Ցարաղի» մէջ տպվածների հերքումը ոչ մի հետաքրքրութիւն, ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ մեր ընթերցողների համար։

ԹԱԼԻՇ ԳԻՒՂ, Պ. Ռ. Մենք ընդունել չենք կարող։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Ն. Ծպակովսկի—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մաքմամարդ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝
127—150 ԹԱԴԷՈՍ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, 1900 թ. ապրիլի 30-ին, պ.պ. անդամների եւ նրանց ընտանիքների համար հայոց դրամատիկական խմբի անդամները կը ներկայացնեն

„ՄՈՒԹ ՈՅԺԵՐ“

Կոմէդիա 5 գործողութեամբ

Տեղերի գինը 20 կ.-ից մինչեւ 1 ր.
Սկիզբը 8½ ժամին եկեղեցեան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ամենքի, որ նա ընդունում է նուիրատուութիւններ Թիֆլիսի գաւառի Մարտկօր գիւղի մայր-եկեղեցին նորոգելու համար։ Եկեղեցին կառուցված է յանուն Փրկչի անձեռագործ պատկերի։ 4—4

Ջրահեղձութիւնից

ազատող Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը երկրորդ անգամ ընդհանուր ժողով է նշանակում ապրիլի 30-ին, երեկոյեան 8 ժամին, առաջին ժողովի փոխանակ, որ չը կայացաւ անդամների օրինական թիւի բացակայութեան պատճառով։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱԼՐԻ ՄԷՋԴԱՆՈՒՄ,

Սարգիս Աղաջանեանի տանը, որ գտնվում է Շիրաշխանի սկզբում, վարձով է տրվում մի փուռ, ջրով եւ հաց թխելու բոլոր սարք ու կարգով։ Հարցնել Սարգիս Աղաջանեանցին, Միջին-փողոցում, Գործլիի մէյդանում, Տէր-Պետրոսեանցի տանը, № 5. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Դպրոցական հագուստ եւ գլխարկ կարվում են Սանովիչի մագազինում, որ գտնվում է Միխայլովսկի կամուրջի վրա, ամենաչափաւոր գներով։ 1—2

Կիրակի, ապրիլի 30-ին, ցերեկվայ ժամը 12-ից մինչեւ երեկոյեան ժամի 8-ը, Թիֆլիսի ամարային ժողովարանում տեղի է ունենալու ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԽԵՂՃ ՕՐԻՈՐԴՆԵՐԻ ՁԵՌԱԳՈՐԾՆԵՐԻ, նոյնպէս կողմնակի անձնաւորութիւններից յօգուտ Ընկերութեան ստացված զանազան իրերի ՎԱՃԱՌՈՒՄ։

Երաժշտութիւնը ժամը 12-ից։
Անձրեւային եղանակին վաճառումը կը յետաձգվի։
Մուտքը մեծերի համար 20 կ., երեխաներից 10 կոպէկ։ 4—4

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵՆԿԻՄՈՎԻՉԻ

Պուշկինեան պատաժ, Թատաժնովի քարավանսարայի հանդէպ։

Ծախվում են տներ, հողաբաժիններ՝ գործարաններ չինելու համար, քաղաքում եւ քաղաքից դուրս՝ գաւառներում։ Ամարանոցներ, նաւթային հողեր։ Մանրամասնութիւնների համար դիմել գրասենեակ։ № 2. 0—27

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՅԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՁՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՑՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԻՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.

Дворцовая ул., д Т. Д. З. Банка.

(շ.) 4—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, թէ նրա դիւանատան մէջ այս տարվայ ապրիլի 29-ին, ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Դվորցօվայա փողոցի եւ երկու կամուրջների մէջ տեղում գտնվող Մադաթեան կղզու սալայատակը, գրանիտի քարերով, բետոնի վրա, 700 քառ. ս. քանակութեամբ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 3—3

1847 թուին հիմնված Ս. Պետերբուրգի „ՆԱԴԵԺԴԱ“

Ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ «Նադեժդա» ընկերութիւնը

1) Իր կարգադրութեան տակ առնելով «Ա. Ա. Զէվէկէ» ընկերութեան բոլոր շոգենաւերը, նաւամատոյցները եւ դեբարկադէրները՝ այժմ ընդարձակ նաւատորմ ունի բեռներ տեղափոխելու համար Վոլգայի ամբողջ տարածութեան վրա՝ սկսած Ռիբինսկից մինչեւ Կասպից ծովի նաւահանգիստները եւ դրանով ապահովեցնում է իր կլիենտներին բեռների արագ եւ ճիշդ տեղափոխութեամբ յիշեալ ջրային ճանապարհով։

Այս նպատակին անշուշտ հասնելու համար, ընկերութիւնը 1900 թուի նաւարկութեան սեզոնում սահմանում է կանոնաւոր նաւային հաղորդակցութիւն Ռիբինսկի եւ Աստրախանի ու Կասպից ծովի նաւահանգիստների մէջ։ Այդ նաւային հաղորդակցութեան օրացուցակը կը հրատարակվի առանձին։

2) Ընդունում է ռուսաց պետութեան հաւարեա բոլոր քաղաքներում բեռներ՝ տեղափոխելու եւրոպական եւ ասիական Ռուսաստանի, նոյնպէս եւ արտասահմանի զանազան տեղերը։

3) Ապահովագրում է որպէս ցամաքային եւ ջրային ճանապարհներով տեղափոխվող բեռները, այնպէս էլ պահեստներում գտնվողները։

4) Ընդունում է ապահովագրութիւն հրդեհից, որպէս անշարժ, նոյնպէս եւ շարժական կայքերի։

5) Ընդունում է ապահովագրութիւն պօստով ուղարկվող արժէքաւոր իրերի։

«Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրոսպէկտի վրա, 102-րորդ տան մէջ (С. Петербургъ, Адмиралтейскій проспектъ д. № 112)։

Շոգենաւային գործերի լիազօրների գրասենեակները գտնվում են—ա) Վոլգայի շոգենաւային գործերի՝ (լիազօր Ալէքսանդր Ալֆէոսովիչ Զէվէկէ) Նիժնի-Նովգորոդում, Նիժնի-Նաբերեժնայա փողոցի վրա, Բուկավիչնիկովի տանը, բ) Կասպից ծովի շոգենաւային գործերի՝ (լիազօր Վլադիմիր Կոնստանտինովիչ Կոզլենկո), Բագուում, Կայսր Ալէքսանդր II-ի ծովափի վրա, «Նադեժդա» ընկերութեան սեփական տան մէջ։ Թիֆլիսի ագենտատվոն գտնվում է Դվորցովի փողոցի վրա, վրաց ազնուականութեան շինութեան մէջ։ 3—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (26 ապրիլի) 9 մայիսի ՄԻՆԳՐԵԼԻ շոգենաւը, նաւապետ ՇԻԼՏ։ Եւ այսպէս յարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ն. հ. շ.) 14—20

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ նրա դիւանատան մէջ 1900 թուի մայիսի 12-ին կը լինի բերանացի եւ փակ ծրարներով աճուրդ ծախելու քաղաքային, նախկին Աբեսալոմովի երկյարկանի ամարանոցը իր դաւթով եւ 203 քառ. ս. գետնով, որ գտնվում է Բօրժօմում, Վօրոնցօվի փողոցի վրա, պարկի մօտ։ Ամարանոցի հետ միասին ծախվում է նաեւ նրա մէջ գտնված չարժական կայքը, որ կազմված է կահ-կարասիներից, ճաշարանի, խոհանոցի եւ թէյի ամանեղէններից։ Ամարանոցի գետինը տուած է համաձայն այն հողային կանոնների, որոնք հաստատված են Կովկասի նախկին Փոխարքայի կողմից 1851 թուի դեկտ. 2-ին այդ տեսակ ամարանոցային հողերի վերաբերմամբ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան դիւանատան մէջ բոլոր լի օրերը, ժամը 10-ից մինչեւ 2-ը։ Փակ ծրարներ ընդունվում են մինչեւ 1900 թուի մայիսի 12-ի ցերեկվայ 12 ժամը. նրանց մէջ պէտք է լինի 2000 ր. գրաւական, բացի դրանից պէտք է գրված լինին աճուրդին մասնակցողի անունը, հայրանունը, ազգանունը, կոչումը, մանրամասն հասցէն եւ առաջարկված ամենաբարձր գինը։ Այն անձինք, որոնք ապրում են Թիֆլիսից դուրս եւ կամենում են ծանօթանալ պայմանագրի հետ, կարող են դիմել վարչութեան՝ խնդրելով ուղարկել իրանց պայմանագիրը։ 4—5

Фабрика карандашей **A. W. FABER** Основана 1761 г.

Всѣ произведенія этой издавна извѣстной фабрики снабжены утвержденнымъ Правит. фабричнымъ



Произведенія А. В. ФАБЕРЪ можно получать въ каждомъ лучшемъ магазинѣ, письм. и рисов. принадлежностей.

КЛЕЙМОМЪ A. W. FABER или A. W. F., или А. В. ФАБЕРЪ

на что во избѣжаніе ошибокъ ПРОСИМЪ ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ

А. В. ФАБЕРЪ

15—30 131559

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նորին Մեծութեան Մատակարար

պալատի

„Վ. Վիսօցկի եւ ընկ.“

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՑԷՅԼՕՆԻ ԹԷՅԵՐ

Ուշադրութիւն ենք հրաւիրում վերջին դրամատարտ մեր

վրա, որ հաստատված է

Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում ստացվել են եւ ծախվում են ցէյլօնի թէյեր։

Ընկերութիւնը ցէյլօն կղզու վրա գտնվող ամենամեծ «Augusta» պլանտացիայի միակ ներկայացուցիչը լինելով ամբողջ Ռուսաց Կայսրութեան համար՝ հնարաւորութիւն ունի վաճառել ամենաբարձր տեսակի թէյեր եւ ամեն տեսակ գներով։

Ցէյլօնի թէյերը ունենալով դուրեկան հոտ եւ համ՝ մի եւ նոյն ժամանակ ամենալաւ գոյն ունեն, ուստի եւ չափազանց յարմար են անտեսութեան մէջ գործածելու համար։

Հասցէն հեռագիրների համար, Высоцкій Москва եւ Высоцкій Тифлисъ. 3—6

Վարչութիւնը Մոսկվայում Лубянско-Ильинскія торговыя помѣщенія, подъѣзды №№ 3 и 4.

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Апрѣля 1900 г.

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.